



*ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ
ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ*

*AM ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ*

ԱՌՍՋԱՐԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի Ընդհանուր մասի Բաժին 3-ի Գլուխ 10-ի Հոդված 55-ը լրացնել հետևյալ բովանադակությամբ նոր՝ 8.1. մասով.

«8.1.Եթե ծախսագրման և/կամ ավելացված արժեքի հարկի հաշվանցի համար հինք հանդիսացող գործարքն իրականում տեղի է ունեցել և գործարքն իրականացնող կողմերի միջև առկա է գրավոր պայմանագիր, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները և հաշվարկային փաստաթղթում հղում է կատարված այդ պայմանագրին, սակայն այդ գործարքի մասով դուրս գրվող սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվարկային փաստաթղթերում բացակայում են սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված որոշ վավերապայմաններ, ապա հաշվարկային փաստաթուղթը համարվում է սույն հոդվածով սահմանված պահանջներին բավարարող»:



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածը նոր՝ 8.1. մասով լրացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես.

ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքը վարչարարության կարևորագույն սկզբունքներից է: Թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ձևական պահանջները չարաշահելու արգելքը՝ որպես վարչարարության հիմնարար սկզբունք, որով վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, սակայն գործնականում վերոնշյալ սկզբունքը բավարար չափով չի կիրառվում:

Խնդիրը հատկապես արդիական է հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի լրացման դեպքում, երբ հարկ վճարողը տեխնիկական վրիպակ է թույլ տալիս վավերապայմանները լրացնելիս, ինչն ըստ էության նշանակում է ձևական պահանջի չպահպանում և չի կարող պատասխանատվության հիմք լինել, սակայն ինչի հետևանքով գործնականում հարկ վճարողը պատասխանատվության է ենթարկվում: Ընդ որում, նման դեպքերում հարկ վճարողների նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը հաճախ խիստ անհամաչափ է լինում և այդպիսով խախտվում է ոչ միայն ձևական պահանջները չարաշահելու արգելքի, այլ նաև պատասխանատվության համաչափության սկզբունքը: Վերոնշյալ խնդիրն առավել հաճախ առաջանում է ծախսագրման և/կամ հաշվանցի դեպքերում:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում Հարկային օրենսգրքի «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածում կատարել առաջարկվող լրացումը՝ այդպիսով ապահովելով ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքի առավելագույնս կիրառումը և կանխելով հարկ վճարողների իրավունքների հետագա խախտումները: